

ԶՕՀՐԱՊԻ ՀԵՐՈՍՈՒՀԻՆԵՐԸ

(Հառ ՏԻԿ. ԶԱՊԵԼ ԱՍԱՏՈՒՐԻ)

Պարոններ եւ տիկիներ,

Զօհրապի գրականութեան վրայ կարող գրագէտներու դատողութիւնները լսել յետոյ, բոլորովին անելոյդ պիտի ըլլար ինծի համար խօսք առնել, եթէ իբրեւ կին՝ մասնաւոր ըսելիք մը չունենայի իր նորավէպերու մասին, գորս տարիներ առաջ կարդացած, կը յիշեմ բոլորն ալ, իբր թէ երէկ կարդացած ըլլայի:

Անոնց վրայ խօսելու համար սակայն պէտք է որ քսան տարի ետ դառնամ, եւ քիչ մը իմ մասիս ալ խօսելու անպատշաճ հարկին մէջ գտնուիմ:

Զօհրապ թերեւս այն գրագէտն է որ ամէնէն անելի տպաւորութիւն գործած է վրաս: Ասոր պատճառը շատ պարզ է. մենք, կիներս, անելի կը յիշենք զմեզ հարուածողները քան զմեզ փայփայողները, որովհետեւ փայփայանքի վարժուած ենք արդէն, եւ Զօհրապի գրականութիւնը ճշմարիտ հարուած մը տուած է իմ հաստատ ու միամիտ հաւատքիս՝ կնոջական արժանապատուութեան եւ կանացի սրբութեան մասին:

Այն միջավայրին մէջ ուր ապրած ու դաստիարակուած եմ, այն շրջապատին մէջ ուր անցուցած եմ մանկութիւնս եւ երիտասարդութեանս մէկ մասը, սա համոզումը ներշնչած են ինծի թէ՝ Զօհրապին հերոսուհիները մասնաւոր դասակարգի մը կը պատկանին, որոնք իրաւունք չունին պատուաւոր մարդկանց սիրոյն եւ յարգանքին: Կրնաք երեւակայել իմ շուարումս, անոնց բացարձակ աստուածացումը տեսնելով՝ ամէն հիացման ու յարգանքի արժանի մեծ գրագէտի մը գրչին տակ:

Ի գուր ժամանակակից գրագէտները կը ջանային տարհամոզել զիս իմ աղանդիս մէջ, եւ ջրել հաւատացեալի խորունկ դաւանանքս, ըսելով թէ իմ ճանչցած